ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 599-Ա/Բ

«2» հունիսի 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1579-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 31-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

?????? ??????????'
Jun 2 2014 3:52 PM

/Արմեն Աշոտյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ 26.02 ԹԻՎ 599 Ա/Ք
ՀՐԱՄԱՆԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ներքին աուդիտի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, <<Ներքին աուդիտի մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկի մասին>>, <<Կրթության մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Գանձապետական համակարգի մասին>>, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>>, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) և աշխատակազմի ղեկավարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում է Նախարարը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4. Վարչությունը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1) Աուդիտի իրականացման բաժին
2) Ծրագրերի և վերլուծության բաժին

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) Իրականացնում է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, պետական հիմնարկների, ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների, 50% և ավել պետական մասնակցությամբ պետական փակ բաժնետիրական ընկերությունների, հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը.

2) Աջակցում է նախարարությանը հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով: Ներքին աուդիտն իրականացվում է Վարչության ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա՝ Նախարարին հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ մատուցելու միջոցով.

3) Նախարարության աշխատակազմում և նախարարության ենթակայությամբ գործող պետական հիմնարկներում, բաժնետիրական ընկերություններում և պետական ոչ առևտրային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներքին աուդիտի իրականացման գործընթացի կազմակերպումը, ծրագրումը, համակարգումը, ղեկավարումը և վերահսկումը.

4) ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետության և օրենսդրության պահանջներին համապատասխանության գնահատումը.

5) Նախարարության կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունը, որով ողջամիտ ձևով երաշխավորվում է հետևյալ պայմաններին համապատասխան Նախարարության նպատակների իրականացումը՝

ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին և այլնին) համապատասխանություն,

բ. տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,

գ. տեղեկությունների ամբողջականություն և վստահելիություն,

դ. կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն.

6) ռիսկերի բացահայտմանն ու գնահատմանը օժանդակելը.

7) հետևել ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորների վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կանոնակարգին և լիազոր մարմնի հաստատած ներքին աուդիտի մեթոդաբանությանը.

8) Առաջնորդվել ներքին աուդիտի կանոնակարգով՝ Նախարարության ներքին աուդիտի վարչության պետի ներկայացմամբ նախարարի կողմից հաստատված փաստաթղթերով, որով սահմանվում են ներքին աուդիտի նպատակը, լիազորությունները և պարտականությունները: Այլ պայմաններից բացի, կանոնակարգը նաև՝

ա. մատնանշում է նախարարության ներքին աուդիտի դիրքը,

բ. սահմանում է ներքին աուդիտի շրջանակը,

գ. կարգավորում է ներքին աուդիտորների համար աուդիտորական առաջադրանքների կատարման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի, աշխատակազմի և գույքի հետ կապված հարցերը.

9) Ներքին աուդիտի են ենթարկվում նախարարության գործունեության ֆինանսական կառավարումը, հսկողությանն առնչվող բոլոր գործառույթները:

10) Հավաստիացման ծառայությունների համար իրականացվող աուդիտը կազմված է ներքին աուդիտորի կողմից ապացույցների օբյեկտիվ գնահատումից,

որպեսզի անկախ դիրքորոշում կամ եզրակացություն ներկայացվի գործընթացի, համակարգի կամ աուդիտի ենթարկված այլ բաղադրիչի վերաբերյալ:

11) Հավաստիացման ծառայությունների համար իրականացվող յուրաքանչյուր աուդիտի խնդիրներն ու շրջանակը սահմանվում են աուդիտորական առաջադրանքով: Ներքին աուդիտն իրականացվում է հետևյալ փուլերով՝ պլանավորում, փաստացի գնահատումների իրականացում, հաշվետվություն և հետագա գործողություններ՝ ներկայացված առաջարկությունների կատարմանը հետևելու նպատակով:

12) Հավաստիացման ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքն իրականացվում է համակարգային մոտեցմամբ՝ համապատասխանության աուդիտի կամ կատարողականի աուդիտի միջոցով կամ համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցությամբ:

13) Խորհրդատվական ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքը բաղկացած է խորհրդատվության, կարծիքի ներկայացման, ուսուցման և այլ ծառայությունների մատուցումից, որոնք ուղղված են կազմակերպության ռիսկերի կառավարման և հսկման գործընթացի բարելավմանը: Ներքին աուդիտորը չի կարող իրականացնել կազմակերպության կառավարման որևէ գործառույթ:

14) Խորհրդատվական ծառայությունների նպատակով նշանակված աուդիտը նախաձեռնում է Նախարարը, և յուրաքանչյուր նման աուդիտի խնդիրներն ու շրջանակը սահմանվում են աուդիտորական առաջադրանքով:

15) Ներքին աուդիտի տարեկան հաշվետվության կազմումը, Նախարարին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացումը:

16) Ներքին աուդիտի կանոնակարգի նախագծի, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի կազմումը, Նախարարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացումը.

17) ՀՀ օրենքներով, նախարարության իրավական ակտերով, ներքին աուդիտի իրականացման ստանդարտներով սահմանված, ինչպես նաև նախարարի հանձնարարությամբ այլ գործառույթների իրականացում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչության գործունեությունը վերահսկում է նախարարը:

7.Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է Վարչության պետը:

8.Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժնի պետերը:

9.Վարչության պետը, վարչության պետի տեղակալը, բաժինների պետերը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

10.Վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժնի պետերի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: